Արձանագրություն թիվ 1

Ք. Վարդենիս *15.01.2020թ.*

Վարդենիսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստի.

Տեղի ունեցավ Վարդենիսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստը:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 9 անդամներից 8-ը:

Օրակարգում՝

1. Անչափահաս երեխա՝ Սյուզաննա Սամվելի Խաչատրյանի՝ ծնված 05/08/2004., ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Երիտասարդության փող. 16/6 հասցեի բնակարանի օրինական ներկայացուցիչ, մայր՝ Մարինե Արտուշի Շահինյանի համաձայնությամբ լիազորված Սուսաննա Մարտիրոսի Տոնոյանին օտարելու թույլատվություն տալու մասին:

Զեկուցող՝ Ս. Ստեփանյան - հանձնաժողովի քարտուղար, համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵ և ՍԱ բաժնի պետի ժ/պ:

Օրակարգը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

Որոշեցին – Հաստատել Վարդենիսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 15.01.2020թ.-ի առաջին նիստի օրակարգը՝ բաղկացած 1 հարցից:

1-ին հարց

Լսեցին – Զեկուցող Ս. Ստեփանյանը նշեց, որ Սուսաննա Մարտիրոսի Տոնոյանը դիմում է ներկայացրել անչափահաս երեխա՝ Սյուզաննա Սամվելի Խաչատրյանի՝ ծնված 05/08/2004, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Երիտասարդության փող. 16/6 հասցեի բազմաբնակարան բնակելի տունը՝ իր օրինական ներկայացուցիչ, մայր՝ Մարինե

Արտուշի Շահինյանի համաձայնությամբ լիազորված Սուսաննա Մարտիրոսի Տոնոյանին օտարելու թույլատվություն տալու մասին:

Խոսելով 4/27 բաժնեմասային հարաբերակցությամբ բազմաբնակարան բնակելի տունը վաճառելու թույլատվություն տալու մասին նա նշեց, որ հարցն ունի օրենսդրական հիմնավորվածություն և համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմինը իրավասու է թույլատրել անչափահասի օրինական ներկայացուցիչ, մոր համաձայնությամբ լիազորված անձին՝ կատարելու գույքի տնօրինման (օտարման) գործարքներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի պահանջների:

Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի դրույթներից և հիմք ընդունելով անչափահաս երեխա՝ Սյուզաննա Սամվելի Խաչատրյանի կողմից, օրինական ներկայացուցիչ՝ մայր Մարինե Արտուշի Շահինյանի համաձայնությամբ լիազորված Սուսաննա Մարտիրոսի Տոնոյանի դիմումը, զեկուցողը առաջարկեց թույլատրել վաճառելու անչափահաս երեխա՝ Սյուզաննա Սամվելի Խաչատրյանի՝ ծնված 05/08/2004., ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Երիտասարդության փող. 16/6 հասցեի բազմաբնակարան բնակելի տան 4/27 բաժնեմասը:

Ելույթ ունեցան- Վարդենիսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամ Ա. Մանուկյանը, Ա. Գրիգորյանը, որոնք ևս կողմ արտահայտվեցին նշելով, որ Սյուզաննա Սամվելի Խաչատրյանը իր մոր հետ փաստացի բնակվում է Ֆրանսիայի Հանրապետության Վիլլոդբան քաղաքում:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Սյուզաննա Սամվելի Խաչատրյանի կողմից լիազորված Սուսաննա Մարտիրոսի Տոնոյանի դիմումը, Վարդենիսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը.

Որոշում է՝

Թույլատրել Սյուզաննա Սամվելի Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ, մայր՝ Մարինե Արտուշի Շահինյանի համաձայնությամբ լիազորված Սուսաննա Մարտիրոսի Տոնոյանին վաճառելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Երիտասարդության փող. 16/6 հասցեի բազմաբնակարան բնակելի տան 4/27 (չորս կոտորակ քսանյոթ) բաժնեմասը:

Հանձնաժողովի նախագահ՝
Համայնքի ղեկավար Ա. Մելքոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ԿՄՍԵ և ՍԱ բաժնի պետի ժ/պ Ս. Ստեփանյան

Անդամներ՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Մանուկյան

Համայնքապետարանի աշխատակազմի
քարտուղար Կ. Զարոյան

Համայնքապետարանի աշխատակազմի
Քաղաքաշինության, բնապահպանության, գյուղատնտեսության և
հողի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գրիգորյան

«Աստղավարդ» ՀԵԾ ՀԿ նախագահ Մ. Եփրեմյան

Համայնքի ավագանու անդամ Ա. Մինասյան

Համայնքի ավագանու անդամ Հ. Երանոսյան